փաստաթղթերը, ինչի ուսումնասիրության արդյունքում միայն Դատարանն ի վիճակի կլինի գնահատել դրանք և որոշել, թե որքանով են դրանք հիմնավորում հայցում նշված փաստերը:

Նշված դատավարական փաստաթղթերը չներկայացնելու պայմաններում Դատարանը զրկված է հայցվորի կողմից նշված փաստարկները հերքող հակափաստարկներ արձանագրելու հնարավորությունից:

Վերը նշվածի հաշվառմամբ Դատարանը գալիս է եզրահանգման, որ պատասխանողի կողմից հայցադիմումի պատասխան և հայցվորի կողմից նշված փաստարկները հերքող ապացույցներ ներկայացված չլինելու պարագայում բացասական հետևանքները պետք է կրի պատասխանողը:

Դատարանը, հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6, 234.10 հոդվածներով, եզրահանգում է, որ հայցը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

7. Դատական ծախսերը

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համասնորեն, իսկ համաձայն նույն օրենսգրքի 101 հոդվածի 1-ին մասի՝ դատական ծախսերը կազմված են նաև պետական տուրքից:

Սույն գործով Հայցվորի կողմից նախապես վճարվել է 79336 ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի գումար:

Հայցը բավարարման ենթակա լինելու պարագայում պատասխանողից հօգուտ հայցվորի ենթակա է բռնագանձման նաև 79336 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

Այլ դատական ծախսեր չեն ներկայացվել:

Առաջնորդվելով վերոգրյալ պատճառաբանությամբ և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ և 362-րդ հոդվածներով, դատարանը

ՎՃՌԵՑ

1. Հայցը բավավարել. անվավեր ճանաչել ՀՀ միասնական սոցիալական ծառայության կողմից իր կարիքների համար ծրագրային ապահովման սպասարկման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով 27.11.2023թ. հայտարարված թիվ «ՄՍԾ ԳՀԽԾԲ-24/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.12.2023թ. նիստի թիվ 3 արձանագրության 3 կետով կայացված՝ «Է և Ա» ՍՊԸ-ի ներկայացված հայտը անբավարար գնահատելու, մերժելու և գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը:

2. ՀՀ միասնական սոցիալական ծառայությունից հօգուտ «Է և Ա» ՍՊ ընկերության բռնագանձել 79336 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

4. Վճիռը կամովին չկատարելու դեպքում, այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

ԴԱՏԱՎՈՐ **Ա. ՄԿՐՏՉՅԱՆ**

Վճիռը մտել է օրինական ուժի մեջ « » _____ 2023թ.:

ԴԱՏԱՎՈՐ **Ա. ՄԿՐՏՉՅԱՆ**